

## ԱՅԼ ԵՒ ԱՅԼՔ

Ազգագրական Հանդիսի մասին եղած գրախօսութիւնները—Ազգագրական Հանդիսի մասին խօսեցին հալոց գրեթէ բոլոր և օտար մի քանի պարբերական հրատարակութիւնները: Սրանցից նպատաւոր էին «Հանդէս Ամսօրեայ» (1895 թ. № 6 և 96 թ. № 5), Ա. Մամուլ (96 թ. № 5), «Մաղիկ» (96 թ. № 13), «Հալրենիք» (96 թ.), «Տարազ» (95 թ. № 23), «Արձագանք» (96 թ. ապրիլ), «Новое Обозрѣніе» (96 թ. ապրիլ), «La revue des Traditions populaires» (96 թ.), «Petermanns Mitteilungen» (1897 թ. ապրիլ), իսկ աննըպատ՝ «Նոր-Ռար» (№ № 79, 80, 81, 82), «Մշակ» (№ 41) և «Մուրճ» (№ 3, 4 և 5), թէև սրանց մէջ ևս կապին նպատաւոր կէտեր \*):

Կարծում ենք, որ այս վերջի հրատարակութիւնների աղաչէս վերաբերուելու պատճառը այն է եղել, որ հիւրնկալել են ոչ մասնագէտ անձերի քննադատութիւնները մի մասնագիտական հանդիսի մասին, որով և՛ ծագրելի հակասութիւնների մէջ են ընկել: Այսպէս օրինակ «Նոր-Ռար»-ի խմբագրութիւնը նախ զովասանքով է խօ-

\*) Իերենք իրր ապացոյց մի քանի օրինակներ.

«Ազգագրական Հանդիս» երեսու մեր պարբերական մամուլի աննախանձելի ասպարէզում մի նշանաւոր երեսութ է: (Մեղաւորեան, «Մուրճ» եր. 463):

«Նորոնում ենք ձաւախք» աշխատութեան ազգագրութեան տեսակէտից ունեցած արժանիքը, որը մենք արևելագէտների կոնգրէսում իսկ (Ժընև) ցոյց ենք տուել: (Մեղաւորեան, «Մուրճ» եր. 465):

«Ն. Լալայեան... իրականութեան մարդ է, նա իր ձաւախքով ցոյց տուաւ, որ հասկանում է և զիտէ գիտել և նկարագրել ժողովրդի իրական կեանքը: (Մեղ. «Մուրճ» եր. 467):

... Գովելի նպատակ, խրախուսանքի արժանի ձեռնարկութիւն, որին կատարեալ աջողութիւն ենք ցանկանում: (Նմբ. «Նոր-Ռար», № 102):

... Ա. գիրքն արտաքին և ներքին կողմից բաւական նպատաւոր տպագրութիւն է թողնում և երևում է, որ խմբագրողը լուրջ աշխատութիւն է գործ գրել վրան: (Նմբ. «Նոր-Ռար», 96 թ. № 55):

Մենք միանգամայն զովում ենք պ. Լալայեանցի հրատարակչական և-

ստամ (Նոյսր-Դարոյ, 95 թ. № 102 և 96 թ. № 55), լետոյ մի սքոլաստիկ փանուէլի բերանով փողոցալին հալոյանքներ թափում և ապա մի քանի շաքաթից լետոյ արտատպում է Ա. Կ. ստորագրութեամբ մի քանի լողուածներ, որոնք գողացուած էին Ազգադրական Հանդիսից, երբեմն քաղուածօրէն, տեղ-տեղ էլ նախադասութիւն առ նախադասութիւն արտադրելով և Ջաւախքի սովորութիւնները վանին վերադրելով: (Հմմտ. Ազգ. Հանդէս I գիրք, եր. 277—319 Նոյսր-Դարոյ 96 թ. №№ 162, 187):

Նոյնքան ծագրելի է և մի ինչ որ վանցեանի գրութիւնը (սՄուրն). պարոնը, որ Լետուրնօի անունն անգամ ուղիղ գրել չգիտէ (գրում է Լէ-Տուրնօ), որ Մորգանի և Լետուրնօ գրուածքները միայն անունով գիտէ, լանկարծ վեր է կենում և մի մասնագիտական հանդէս, և ֆրանսիալի պարծանք Լետուրնօին քննադատում:

Մի ուրիշը, Լ. դատապարտում է մեզ, որ մենք մեզ մեծ նպատակներ ենք գրել, որ մեր ուժերից վեր գործ ենք սկսել, և որ մենք մեր ա. գրքով չենք իրագործել մեր նպատակը (սՄշակոյ 96 թ. № 41): Պարոնը այս տողերը գրելիս արդեօք իրեն հաշիւ է տուել, թէ նպատակը դուռն է նրա համար, որ այդ նպատակը համակրողները համախմբուին և աշխատեն իրագործելու, թէ իւրաքանչիւր հանդէս ոչ միայն մի անհատի, այլ սրա նախածեռնութեամբ համակրողների ուժերի վրայ է հիմնուած և թէ ամէն մի ձեռնարկութեան սկզբում թիրութիւններ կունենալ, և մենք հեռու ենք մեր գործի վրայ այլ կերպ նախելուց, բաց չէ որ միշտ ձգտելով դէպի միևնույն նպատակը, հնարաւորութիւն կալ աւելի մօտենալու կատարելութեան, քան զուրկ լինելով նպատակից՝ շարունակ խարխալիլ:

Այս բոլորը մեզ մի խորհրդածութեան է տանում. ի՞նչ է պատճառը, որ հալոց գրականութիւնը ալժամ ալժպէս աննախանձելի գրութեան մէջ է ընկել: Արդեօք այն չէ, որ մենք շատ ամենագէտներ, բաց ոչ մասնագէտներ ունինք: Ամէն մի գրող գրում է ամէն քանի մասին, և այս պատճառով էլ ոչ մի հարցի մէջ ոչ կարող է և ոչ էլ ժամանակ ունի խոր թափանցելու, ուստի և բոլոր գրուածքները և անվասութիւնը գրամական զոհողութիւնների առջ: (Լ. սՄշակոյ, 96 թ. № 41):

Վալալեանի աջախորտ, որ բանում է 261 երես (գրքի կիսից քիչ ակել) մի մանրամասն, բարեխիղճ և շատ հետաքրքրական տեղագրութիւն է, որ կարգացում է ախորժանքով: Ժողովրդական կեանքի և ոչ մի կողմը չէ մոռացուել. տնտեսական կեցութիւն, սովորութիւններ, աւանդութիւններ, խօսք ու զրոյց—ամէն բան կալ, Այս գրուածքին են վերաբերում մի քանի հաս շատ սիրուն պատկերներ: (Լ. սՄշակոյ, № 41):

. . . Լետուրնօի գործը շատ հետաքրքրական բան է և հսկանալի լինելով է թարգմանուած: (Լ. սՄշակոյ, № 41):

ները դուրս են գալիս վեր ի վերու, թեթև և արժէք չունեցող, Ապպիսով նա ոչ միայն սպանում է ընթերցողի ժամանակը, այլ և փշաքնում նրան, սովորեցնելով թեթևութեամբ վերաբերուիլ դէպի ամենալին ինչ, թուացիկ կերպով նայել և անցնել, Սև երբ մի լուրջ բան է գրում աղպիսի ընթերցողի առաջ, սովոր չլինելով լեռ է քաշւում և փոխանակ իւր ճաշակի խանգարումը խոստովանելու, առաջարկում են է դատապարտում: Ապպիսի վերաբերումն ու խակ դատապարտութիւնները մեր մէջ դժբախտաբար խեղդել են մի քանի մասնագիտական հանդէսները, լուսերել են հալ մասնագէտներին, ասպարէզից հեռացրել լրջամտ գրողներին....

Նոյնպիսի հարուածներ մեզ էլ են գալիս, սակայն մեր ձեռնարկութիւնը սաղգի՝ ինքնօճանաչութեան զգացման վրալ հիմնուած լինելով՝ (Ազգ. Հան. Ա. գ., եր. 5) լուս ունինք՝ որ ինքնօճանաչութեան զարգացմամբ, սա ևս պիտի առաջ դնալ, և աղգի ինքնօճանաչութեան ոգին չպիտի թուլ տալ կորչելու մի հանդէս, որ կուտուած է իրականապէս պատկերացնելու նրա կեանքի որոշ երևութները:

Թո՛ղ չարանենգները մեր վերոլիշեալ խօսքերը մեծամտութիւն չհամարեն և ո՛չ էլ իրենց իրաւունք տան մեզնից մասնագէտներին մի ահագին խումբ պահանջելու: Մենք լուրջ դիտաւորութիւններով, և մասնագիտաբար աշխատելու տենչով ասպարէզ ենք եկել և մեր ալս հրատարակութիւնը զեռ ևս լոկ փորձ է ի մի խմբելու մեր մասնագէտներին, ընդհանուր ուժերով մի գեղեցիկ գործ կատարելու: Սթէ սիրով ընդունեն ալդ հրաւէրը հալ մասնագէտները, ալն ժամանակ կուճենանք մի ազգագրական ընկերութիւն և նրա օրդանը, որ անհամեմատ բարձր կը լինի ալժմեան փորձերից և, վստահ ենք լիովին կը համապատասխանի իւր կոչմանը. իսկ եթէ ոչ, առանց ուրիշների աղմուկների էլ ինքն իրեն կանգ կառնի:

Ապպէս ուրեմն, մենք խնդրում ենք ոչ մասնագէտներին իզուր աղմուկներ չբարձրացնել, իսկ մասնագէտներին հաճիլ միահամուռ ուժերով փրկելու զոնէ ալն մնացորդները, որոնք կարճ միջոցում արդէն կարող են բոլորովին անհետանալ \*): Ինչքան էլ որ քիչ բան փրկենք, անուամենալին ծառայած կը լինինք գործին:

Մեզնից բոլորովին անկախ պատճառով չկարողացանք հրատարակել Լետուրնօի «Ընկերաբանութիւնը» և «Ստատիստիքական տեղեկութիւններ» հաւաքելու ծրագիրը:

\*) Յիշենք կորուստ սպառնացող պատճառներից զոնէ մինը — Անդրկովկասում ալժմ շինուող նրկաթուղիները:

Մեզնից անկախ էին նաև արև պատճառները, որոնք թող  
չտուրին հրատարակելու անցեալ տարուալ երկրորդ համարը:

Անցեալ տարի Սւլախ կալարանում ասլ իրերի հետ գողացան  
նաև մեր նոր ստացած քսան և երկու քլիշան, որը և մասամբ  
պատճառ եղաւ համարի լրջ շտեմնելուն:

Այս տարուալ երկրորդ համարը (երրորդ գիրքը) լրջ կը տեսնի  
հոկտեմբերին:

Վարանդային վերաբերեալ նիւթերը խմբագրուելուց լետոյ  
կարդացուած են լողուածագիրներից և ասլ սեղացիներից կազմուած  
ժողովներում, լատկապէս վերատուգելու նպատակով:

Հանդիսի լաջորդ համարում կը տանք Վարանդայի բնակա-  
րանների, զղեստների ու զարդերի, ինչպէս և՛ նշանաւոր տօների  
նկարագրութիւնը և բանաւոր գրականութեան վերաբերեալ նմուշներ:

Լ. քննադատի պահանջներից մինը («Մշակ» № 41)—նախ  
տալ ժողովրդականացրած երկեր—իրաւացի գտնելով այս համա-  
րում փոխանակ Սպինսերի «Ընկերաբանութեան» համառօտութեան  
թարգմանութիւնը տալու (որ արդէն պատրաստ ունինք), տալիս  
ենք կանեստրինի «Մարդաբանութիւնը», որ անհամեմատ աւելի  
մատչելի է ընթերցող հասարակութեան մեծ շրջանին:

\*  
\* \*

Վարանդայի «Հաւատքը» արդէն թարգմանուած է ֆրանսերէն:  
Լտում ենք, որ պ. Ջելինսկին ձեռնարկել է քաղուածօրէն  
թարգմանելու ուստերէն «Ազգագրական Հանդիսի» Ա. գրքի մէջ  
տպուած «Ձաւախքը»:

\*  
\* \*

Արդէն ձեռնարկուած է նիւթեր հաւաքելու Լոռու (Տաշիր) և  
Ջանդեղուրի գաւառների մասին, ուստի խնդրում ենք, որ նիւթեր  
ունեցողները ուղարկեն մեզ իրենցն էլ, մերիճների հետ միացնելու:  
Պարզ է, որ իւրաքանչիւր նիւթ կը տպագրուի հաւաքողի ստորա-  
գրութեամբ:

Սկսելով տպագրել սկենդանական վէպը, խնդրում ենք ամէն  
կողմից նիւթեր ուղարկելու մեզ:

Կարծում ենք, որ եթէ լաջողինք բաւականին նիւթեր հաւաքելու և վերջը միւս ազգերի նորնանման վէպերի հետ համեմատելու, կարող է շատ հետաքրքիր լինել և գիտական արժէք ունենալ:

Արդէն սկսել ենք արհեստներին վերաբերեալ աւանդութիւններ, սնտոխապաշտութիւններ, առածներ հաւաքել, ուստի և՛ խընդրում ենք ալ մասին ևս նիւթեր ուղարկել մեզ, որոնք կը տպուին ուղարկողների ստորագրութեամբ:

Շնորհակալութիւն ենք լստնում պ. Յ. Քամալեանին, որ համակրելով մեր Հանդէսը, քսան և հինգ օրինակի բաժանորդ գրուելով՝ նուիրեց զանազան հիմնարկութիւնների:

Արաստանմանից մեր Հանդիսին բաժանորդ գրուողները կարող են դիմել նաև Վիէննայի «Հանդէս Ամսօրեալ»-ի խմբագրութեան, (Rédaction de la Revue Handess Amsorya, au Couvent des RR. PP. Mechitharistes. Vienne, (Autriche VII/2 Mechitaristengasse 4), որին նաև պիտի ուղղել արաստանմանից մեզ հասանելի գրամները: Փոխադարձաբար, «Հանդէս Ամսօրեալին» էլ Ռուսաստանից բաժանորդ գրուողները կարող են դիմել և մեզ:

Ուսումնասիրութիւններ հայկական ցեղագրութեան մասին.— Բազմավէպի (№ 3) մէջ կարդում ենք. «Հունգարացի հալազգի ուսուցչապետ պ. Ղուկաս Պատրուբանի գերմաներէն լեզուով հրատարակած թերթն, որ է՝ Ուսումնասիրութիւնք հայկ. ազգագրութեան (Beiträge zur armenischen Ethnologie), կը կազմէ ի Բուդապէշտ ուսուցչ. Ան. Հերմանի ձեռքով հրատարակուող «Ethnologische Mitteilungen aus Ungarn» Հանդիսի մի մասը: Այս պլակիտ պիտի լաջորդին 19 ուրիշ պրակներ ևս զուտ հայկական պարունակութեամբ, որոց խրաքանչիւրը 20 թերթերէ կը բաղկանալ, և գինն է 10 մարկ»:

Ուրախութիւնով օղջուտում ենք արպիսի մի օգտուէտ ձեռնարկութիւնը և կատարեալ լաջողութիւն ցանկանում:

Շնորհակալութեամբ ստացել ենք հետեւեալ գրքերը.

1) Մոսկուայի Կայսերական Հնագիտական ընկերութիւնից. — *Материалы по археологии Кавказа. Выпуск I—V.*

- 2) Նոյն ընկերութիւնից.—Древности восточныя. Вып. I—V.
- 3) *Халатьянц*.—Армянскій эпосъ въ исторіи Арменіи Моисея Хоренскаго.
- 4) *Լազարեան ճեմարան*.—Исследования и статьи Н. О. Эмман.
- 5) Ս. Մախոտեան.—Ուսումնասիրութիւն փառաքան Բիզանդիպատմութեան:
- 6) Պոօշեան.—Բողոք երկերը (13 կտոր):
- 7) Հայկունի.—Բողոք երկերը (3 կտոր):
- 8) Սմբատեան.—Տեղագիր Գեղարքունի գաւառի:



**Ա Ջ Գ Ա Գ Ր Ա Կ Ա Ն Հ Ա Ն Գ Ի Ս Ի**

**Ա. ԳՐՔԻ ԲՈՎԱՆԳՆՈՒԹԻՒՆԸ**

**Ա.Ջ.Գ.Ա.Գ.Ր.ՈՒԹ.ԻՒՆ**

	Երես
Հրատարակչից, Ե. Լալայեան . . . . .	5
Համառօտ տեսութիւն Հայ ազգագրութեան, Ե. Լալ. . . . .	7
Մաննիացոց տէրութիւնը ըստ Վալդեմար Բեւլքի, Լ. Բ. . . . .	27
Խոջալուի գերեզմանները, Լ. Բաբայեան. . . . .	37
Խժկօնք, Կրպէ . . . . .	41
Կովկասի տեղը քաղաքակրթութեան պատմութեան մէջ, Ռ. Վիրխովի, թարգ. Լ. Բաբայեան . . . . .	50
Ջաւախք, Ե. Լալայեան.	
ա) Պատմական Համառօտ տեսութիւն . . . . .	116
բ) Ջաւախքի տեղագրութիւնը . . . . .	125
գ) Հնութիւններ . . . . .	153
դ) Բնակիչներ . . . . .	173
ե) Վիճակագրական տեղեկութիւններ . . . . .	186
զ) Ազգաբնակութեան շարժումն . . . . .	193
է) Տնտեսական դրութիւն . . . . .	200
ը) Ժողովրդի լուսաւորութիւնը . . . . .	218
թ) Հայ գիւղացիների բնակարանները . . . . .	224
ժ) Ձգեստ և զարգ . . . . .	227